ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» փետրվարի 2014թ. N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 34-րդ գլխի կանոններով, Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի «Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքն օգտագործման տրամադրելու և օտարման 2014 թվականի ծրագրի վերաբերյալ» հ.95-Ն որոշմամբ հաստատված ծրագրի 3-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.6/2 շենքի հ.1՝ 84.1քմ մակերեսով բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Պետրոս Հարությունյանին, Կարեն Հարությունյանին, Գայանե Հարությունյանին, Սեմյոն Հարությունյանին, Նարեկ Հարությունյանին, Ալա Հարությունյանին:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք - Հ Ի Մ Ն Ա Վ Ո Ր Ո Ւ Մ

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջանի Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.6/2 հասցեում գտնվող շենքը նախկինում հանդիսացել է ԴՕՍԱԱՖ-ի ճաշարանի շենքը: Աջափնյակ և Դավթաշեն համայնքների առաջին ատյանի վճռի համաձայն շենքը համարվել է տիրազուրկ և ճանաչվել է Երևանի Դավթաշեն համայնքի սեփականությունը և 2007թ.-ին համայնքի անվամբ կատարվել է իրավունքի պետական գրանցում:

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 110-րդ հոդվածի համաձայն՝ շենքը ներկայումս համարվում է Երևան համայնքի սեփականություն:

Նշված շենքում 1998-2001թթ. սկսած մինչև օրս թվով 21 ընտանիքներ առանց իրավահաստատող փոստաթղթերի զբաղեցնում են տարածքներ, որոնք բնակիչների կողմից վերակառուցվել են բնակարանների և փաստացի բնակվում են այդտեղ:

Երևանի քաղաքապետի 15.02.2012թ. հ.1493-Ա որոշմամբ շենքի թվով 21 ոչ բնակելի տարածքներն ընդգրկվել են բնակելի ֆոնդում և ներկայումս թվով 5 բնակելի տարածքների նկատմամբ կատարվել են Երևան համայնքի սեփականության իրավունքների պետական գրանցում:

Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.6/2 հասցեի հ. 1 բնակարանը փաստացի զբաղեցնում է քաղաքացի Պետրոս Հարությունյանի ընտանիքը առանց իրավահաստատող փաստաթղթերի:

Համաձայն ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տեղեկատվական կենտրոնի տվյալների, Պետրոս Հարությունյանի, Կարեն Հարությունյանի, Գայանե Հարությունյանի, Սեմյոն Հարությունյանի, Նարեկ Հարությունյանի, Ալա Հարությունյանի անվամբ Հայաստանի Հանրապետությունում որևէ անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում կատարված չէ:

Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշման ծրագրի 3-րդ կետի համաձայն՝ Երևան քաղաքի սեփականություն համարվող գույքը կարող է անհատույց օտարվել միայն Երևան քաղաքի ավագանու որոշմամբ, բացառությամբ՝ ծրագրի 4-րդ կետի:

Ծրագրի 4-րդ կետով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքների առկայության դեպքում Երևան քաղաքի սեփականություն համարվող բնակարանները, բնակելի տները և բնակելի տարածքները կարող են սեփականության իրավունքով անհատույց փոխանցվել քաղաքացիներին Երևանի քաղաքապետի որոշմամբ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տվյալ դեպքում բացակայում են Երևան քաղաքի ավագանու 2013 թվականի դեկտեմբերի 10-ի հ.95-Ն որոշման ծրագրի 4-րդ կետի 1-ից 7-րդ ենթակետերով նախատեսված իրավական և/կամ փաստական հանգամանքները, ուստի անհրաժեշտություն է առաջացել ընդունելու Երևանի ավագանու համապատասխան որոշում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«ԵՐԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ